

1919 — 1925 թ. ՆԻԸՐ ԻՍՔ ԲԸԼԻՑԻ

ՃԻՊԼԵՑԻ ՈՐԲԱՆՈՅԸ ԵՂՈՂ ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԵՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Ներքև իսկ Բըլիֆի Ճիպլեյի (Լիրանան) Որբանոցի աշակերտութեան զարոյցական ապրումն ու զարգացումը, իր բնականորէն գծերով, կ'ուզենք ՅՈՒՇԱՄՈՍԵԱՆԻ ձեռով հրատարակութեամբ մը յաւերժացնել:

Այդ քանի մը տարուան զարոյցական կեանքը բացառիկ նշանակութիւն ունեցաւ բոլորիս համար, այն իմաստով, որ մեզմէ ամէն մէկը իր ապագայ կեանքի հիմը դրաւ ու կազմաւորեց այդ ժամանակամիջոցին. այդ իսկ պատճառաւ այդ շրջանը եղաւ և մնաց մեր կեանքի յիշատակներէն ամենաերջանիկը և անմոռանալին:

Այս նպատակը իրագործելու համար կազմուեցաւ Ճիպլեյի Որբանոցի Յուշամատենի Հրատարակութեան Յանձնախումբ մը, 1959 Յունիս 6-ին Մըքսիկոյի պանդոկին մէջ գումարուած ժողովի ներկաներուն բուն վաժարով ու բնականորէն հաւանութեամբ: Այս Յանձնախումբը անմիջապէս գործի լծուելով, ստորագրեց այս տողերը այն մեծ ցանկութեամբ ու յոյսով, որ իրականութիւն դառնայ այս առաջագործած ծրագիրը. առ այդ, սրտանց կոչ կ'ընենք բոլոր անոնց, որոնք Որբանոցի կազմութենէն սկսեալ եղած են այդ հաստատութեան մէկ անդամը — աշակերտ, ուսուցիչ, տնօրէն, խնամակալ, դասախօս, բժիշկ, հիւանդապահ, սպասարկող — մայրիկ, հայլն — և գտնուած են Հալէպ, Այնթապ, Պէյրութ և մեր վերջին ապաստանարանը՝ Ճիպլեյ, և սիրով կը հրաւիրենք զիրենք որ աջակցին մեզի հետեւեալ տեղեկագրութիւններով ու նիւթերով:

Ա. — Յուշագրութիւն, Որբանոցին մէջ և անոր հետ կապուած առօրեայ կեանքի ու կարեւոր զէպքերու մասին:

Բ. — Դասարանային բաժանմունք, դասականութիւններ, մարմնամարզական շարժում, սկսնական մարզանք, հաշարանի և ննջարանի կարգ ու կանոն, հայլն:

Գ. — Աշակերտութեան, ուսուցչութեան ու խնամակալութեան անուանացանկ, նկարներ ու կենսագրականներ:

Դ. — Հաստատութենէն հեռանալու պարագաներն ու թուականը:

Ե. — Որբանոցէն դուրս, կեանքի ասպարէզ մտնելու թուականէն մինչև ներկայ օրերու ապրումներու համառօտ նկարագրութիւններ, բնտանեան անդամներու անուններն ու գործունէութիւնը, խմբանկարներ, այլեայլ ասպարէզի մէջ տիրացած իր գիրքին, զբաղումին նկատմամբ մանրամասնութիւններ, անուն, հասցէ, հայլն:

Զ. — Մահացողներու վերաբերմամբ մասնաւոր տեղեկութիւններ, կենսագրականներ, թուականն ու վայրը, հայլն:

Վերջապէս, մեր որբերու տունն ու զարոյցը եղող Որբանոց հաստատութեան Պատկանք մարդջանող նիւթեր զրկել Յանձնախումբի քարտուղար Պր. Խաչատուր Ն. Մակարեանի՝ հետեւեալ հասցէով. —

Mr. K. H. Magarian, 114, First Street, YONKERS, N. Y., U. S. A.

Կը խնդրենք որ այս կոչը ստացողներ հաղորդեն զայն իրենց ծանօթ եղբայրակիցներուն ու տարածեն ամէն կողմ և թղթակցութեամբ յարաբերութեան մէջ մտնեն մեզի հետ անմիջապէս:

Եղբայրակցական սիրով, ի զիմաց Ճիպլեյի Որբանոցի Յուշամատենի Հրատարակութեան Յանձնախումբի

Քարտուղար՝ Խ. Ն. ՄԱԿԱՐԵԱՆ

Ատենապետ՝ ՊՕԴՈՍ ԺԱՄԿՈՅԵԱՆ

Նիւ Եօրք, Յունիս 20, 1959

ԼՈՅՍ ՏԵՍԸԻ

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Փ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Փոքրածաւալ)

Ընտիր կազմ եւ մաքուր տպագրութիւն, էջ՝ 636: Գին՝ 350 ժիլս կամ 7 շիլին: